

## Ընդդիմախոսի Կարծիք

Գոհար Գարեգինի Հակոբյանի՝ Ժ.02.06 «Ասիայի Հին և Նոր Լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված «Հարավ-կասպյան – ատրպատականյան իրանական լեզվամիությունը» վերնագրով ատենախոսության վերաբերյալ

Բավականին խոսուն, որոշ առումով հավակնոտ վերնագրով այս ատենախոսությամբ Գոհար Հակոբյանը առաջին անգամ փորձել է սահմանել խաչաձև հնչյունական, ձևաբանական և բառային զուգաբանությունների վրա հիմնված մի լեզվամիություն, որի աշխարհագրական տարածքն ընգրկում է Կասպից ծովի անմիջական հարավային ափամերձը, դրանից ավելի հարավ ընկած Սեֆսանի ու Ալբորգի շրջանները և Ատրպատականը: Ատենախոսությունը հիմնված է ժողովրդագրական, դավանական, և բնականաբար լեզվական առումներով խիստ խայտաբղետ այս տարածքներում խոսվող իրանական լեզվաընտանիքի հյուսիս-արևմտյան ճյուղին պատկանող լեզուների ու բարբառների նյութի վրա: Հանգամանքը, որ ատենախոսության մեջ քննվում է գրեթե երկու տասնյակի հասնող լեզուների ու բարբառների (զազա, գորանի, թալիշերեն, թաթերեն, «թաթակերպ» լեզուներ, գիլաքի, մազանդարանի, Սեֆսանի շրջանի լեզուներ, կենտրոնական կասպյան բարբառներ, կենտրոնական Ալբորգի շրջանի անցումային բարբառներ), տրամադրած լեզվանյութ, արդեն իսկ պայմանավորում է աշխատանքի հավակնոտությունը: Կարծում եմ ատենախոսին հաջողվել է, այսպես ասած, գլուխ հանել իր իսկ նախանշած խնդիրների բարդ կծիկից:

Նախաբանում հեղինակը հակիրճ ներկայացնում է «լեզվամիություն» հասկացությունը՝ ընտրելով այդ հասկացության բովանդակային բաղադրիչներից իր աշխատանքի համար ամենահարմարն ու համապատասխանը՝ այն է ցեղակից լեզուներում առկա հնչյունական, ձևաբանական ու բառապաշարային զուգաբանությունների հիման վրա լեզվամիություն կառուցելու կամ սահմանելու պայմանը:

Հաջորդ՝ ծավալով ամենափոքր գլխում ատենախոսը քննության առարկա է դարձրել իր իսկ բնորոշմամբ միակ՝ բացառիկ հնչյունական զուգաբանությունը զազայում և գորանիի մի շարք բարբառներում. նախաիրանական սկզբնական \*h<sub>2</sub>- (\*xw-/hw-) հնչյունախմբի զարգացումը

դեպի w-/v-: Մնացած մյուս լեզուներում և բարբառներում նույն հնչյունախումբն արտացոլված է h- կամ x- տարբերակներով՝ ամենայն հավանականությամբ իրանական լեզվաընտանիքի հարավ-արևմտյան որևէ լեզվի կամ լեզուների ազդեցությամբ (էջ 17): Ջազայում և գորանիի մի շարք բարբառներում w-/v- տարբերակների առկայությունը հեղինակը պայմանավորում է այդ լեզուների մեկուսացվածությամբ: Այս գուգաբանությունը հիմնավորելու համար ատենախոսն առանձնացրել է տասներկու բառամիավոր՝ հարստացնելով դրանց քննությունը ինչպես մյուս լեզուներում առկա իմաստային համարժեքներով, այնպես էլ երբեմն ստուգաբանական գուգահեռներով հին և միջին իրանական լեզվադարաշրջաններից:

Երրորդ՝ ծավալով ամենամեծ գլխում հեղինակը ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է խնդրո առարկա լեզուների ու բարբառների ձևաբանության բնագավառի գուգաբանությունները, որոնցից առավել հասկանալի են հետևյալները.

1. Բայի սահմանական եղանակի ներկա ժամանակաձևի կազմությունը հին իրանական \*-ant վերջածանցով ներկայի դերբայից. այս գուգաբանությունը արձանագրված է զազայում, արևելյան գիլաֆիում, մազանդարանիում, Սեփսանի շրջանի լեզուներում, «թաթակերպ» լեզուների խմբից թալեղանիում, կենտրոնական կասպյան ու կենտրոնական Ալբորզի բարբառներում:

2. Սահմանական եղանակի ներկա շարունակական ժամանակաձևի կազմությունը andar նախդրի տարատեսակ զարգացումներով. այս գուգաբանությամբ միավորվում են հյուսիսային թալիշերենը, թաթերենը, գիլաֆին, կենտրոնական կասպյան և կենտրոնական Ալբորզի բարբառները, «թաթակերպ» Թալեղանի և Ալամութի բարբառները, մազանդարանին, Սեփսանի շրջանի լեզուները: Այնուհանդերձ, նույն ժամանակաձևի կազմությունը k ցուցիչով և նրան հաջորդող ձայնավոր + r + ձայնավոր բանաձևով որպես գուգաբանություն աշխատում է հարավային և կենտրոնական թալիշերենում, հարավային և կենտրոնական թաթերենում, գիլաֆիում, «թաթակերպ» խմբից՝ ռուդբարիում: Իսկ ցուցական դերանուններով շարունակական ժամանակաձևի կազմությամբ աչքի են ընկնում զազան և հյուսիսային

թաթերենը: Այսպիսով, վերոնշյալ կազմություններով առանձնացվում են երեք  
գուգաբանական շերտեր: Հեղինակն իրավացիորեն շեշտում է, սակայն, որ այս  
շերտերի միջև սահմանները բավականին հեղհեղուկ են և դրանք շատ հաճախ  
միախառնված են:

3. Սահմանական եղանակի անկատար ժամանակաձևի կազմությունը պարթևերենի  
ընդհանուր առկա է թալիշերենում, կենտրոնական թաթերենում, գորանիում,  
կենտրոնական կասսյան բարբառներում, թալեղանիում, և այլն:

4. Հոլովական համակարգի առկայությունը Սեֆսանի բարբառներում, զազայում,  
գորանիում, հարավային, և կենտրոնական թաթերենում:

5. ներգոյական հոլովի արտահայտումը հին իրանական \*zrd- արմատի  
գարգացումներով զազայում, թալիշերենում, թաթերենում, «թաթակերպ» թալեղանի  
բարբառում, մազանդարանիում, գորանիում, կենտրոնական կասսյան և կենտրոնական

Ալբորգի, Սեֆսանի շրջանի լեզուներում:

Այսպիսով, հեղինակը ցույց է տալիս, որ ձևաբանության մակարդակում զազան և  
գորանին, որոնցով խոսողները մոտավորապես 10-12-րդ դարերում լքել են իրենց  
պատմական հայրենիքը՝ ենթադրաբար կասսից ծովի հարավային շրջանը, ամենաշատ  
գուգաբանությունները ունեն թաթերենի և թալիշերենի հետ:

Ատենախոսության վերջին՝ չորրորդ մասում որպես հավելված հեղինակը ներկայացրել է թվով  
երեսուն բառային գուգաբանություններ: Ատենախոսության առաջաբանում հեղինակը նշում  
է, որ գուգաբանությունների վերհանման համար որպես գործիքակազմ ընտրված է դրանց  
համաժամանակյա լեզվական վիճակը, այնուհանդերձ թե այս վերջին գլխում, թե  
ատենախոսության այլ մասերում՝ հատկապես տողատակերում բերվող  
մեկնաբանություններում ու ծանոթագրություններում, հեղինակը թերևս չի դիմացել  
ստուգաբանություններ ներկայացնելու գայթակղությանը՝ դրական իմաստով: Այդ  
հանգամանքը միայն հարստացրել է աշխատանքը և լրացուցիչ հետաքրքրություն հաղորդել  
ատենախոսությանը: Բառապաշարի քննությունը ցույց է տալիս, որ զազան և գորանին՝

դասական իմաստով «լեզվամիություն» եզրույթը կիրառվում է որևէ արեալում իրար հետ ծագումաբանական առնչություն չունեցող կամ շատ քիչ առնչություն ունեցող լեզուների համար, հազվադեպ էլ կիրառվում է ցեղակից լեզուների համար, ապա ատենախոսությունը առավել ամբողջական կլիներ, եթե նախաբանում որոշ անդրադարձ լիներ «լեզվամիության» վերոնշյալ չափանիշներով օրինակների: Քննական մոտեցմամբ այնպիսի հեղինակների աշխատանքների ներկայացումը, ինչպիսիք են Բողունն դը Կուրտենեն, Տրուբեցկոյը, Յակոբսոնը, Կոպիտարը, Էմենոն, և այլք, որոնք ոչ միայն սահմանել, այլև մենագրություններ են նվիրել «լեզվամիություն» երևույթի ուսումնասիրությանը կոնկրետ տարածքների լեզուների հիման վրա (Հարավ-Արևելյան Ասիայի լեզվական արեալ, Հնդկական թերակղզի, Բալկաններ, և այլն), ատենախոսությունը հարստացնելուն զուգահեռ, թույլ կտային հեղինակին ավելի առարկայորեն հիմնավորել ցեղակից լեզուների առումով «լեզվամիություն» երևույթի կիրառումը:

Հեղինակը ատենախոսության մեջ կրկին իրավացիորեն նշում է, որ բավականին բարդ է գծել այն սահմանը, որի առկայությամբ կորոշվի այս կամ այն զուգաբանության այսպես կոչված ծագումաբանությունը՝ միննույն աղբյուրից ինքնուրույնաբա՞ր առաջացած լինելու, թե՞ լեզուների փոխհարաբերությունների արդյունքում փոխառված լինել-չլինելու առումով: Բնականաբար, ատենախոսության եզրակացության հատվածում հեղինակն ավելի շատ հարցեր է առաջ քաշում, քան պատասխաններ: Իհարկե, կոնկրետ հարավ-կասպյան և ատրպատականյան իրանական լեզուների առնչությամբ «լեզվամիություն» եզրույթի կիրառումը հեղինակի առաջ քաշած թեզն է, որն էլ հենց ատենախոսության հիմնական գաղափարն է: Իր թեզն ատենախոսը փորձել է հիմնավորել միայն հնչյունական, ձևաբանական ու բառապաշարային զուգաբանությունների քննությամբ, այնուհանդերձ հարցը շատ ավելի խորքային ուսումնասիրության կարիք ունի:

Կարելի է առաջ քաշել մեկ այլ թեզ. արդյո՞ք այս ատենախոսության մեջ վերոնշյալ լեզվամիության անդամ, օրինակ, Սեֆսանի բարբառն իր տարածքին հարավից, արևելքից, արևմուտքից սահմանակից իրանական և նույնիսկ ոչ իրանական լեզուների ու բարբառների հետ, կամ Ատրպատականում տարածված բարբառները հարավից ու արևմուտքից իրենց սահմանակից այլ լեզուների հետ կարո՞ղ են կազմել լեզվամիություն, թե՞ ոչ: Ամենատարբեր

գուգարանությունների բացառիկության՝ ատենախոսության մեջ քննված լեզուներով սահմանափակված լինելու հանգամանքը, թերևս, կարող է թույլ տալ հիմնավորապես պնդելու, որ գոյություն ունի ատրպատականյան և հարավ-կասպյան լեզուների լեզվամիություն: Ատենախոսը պահպանել է այս սկզբունքը՝ շեշտը դնելով միայն բացառիկ գուգարանությունների վրա, ուստի բնավ զարմանալի չէ, որ հայտնաբերվել է ընդամենը մեկ հնչյունական գուգարանություն:

Կհորդորեի Գոհար Հակոբյանին շարունակել այս ուղղությամբ հետազոտությունը, որի համար նա միանգամայն տիրապետում է պատշաճ գիտելիքի և ունի համապատասխան պատրաստվածություն:

Կարծում եմ, աշխատանքը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

Վահե Բոյաջյան, բ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության Ինստիտուտ  
29 մայիսի, 2022 թ.

Ընդդիմախոսի ստորագրությունը հաստատում եմ

Տորք Դալալյան, բ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության Ինստիտուտի գիտքարտուղար

